

ԽԱՐՂԱԽՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՈՒՄԸ ԽԱՔԵՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ԿՆՔՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ԳՈՐԾԱՐՔԻՑ

Արմեն Գրիգորյան

ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Վերջին ժամանակներս քրեաիրավական պրակտիկայի ու տեսության մեջ խարդախության և խաբեության ազդեցության ներքո կնքված քաղաքացիաիրավական գործարքների և համապատասխանաբար դրանց համար պատասխանատվության սահմանազատման հարցը բուռն քննարկման առարկա է դարձել: Խնդիրն այն է, որ գործնականում երբեմն քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու հետ կապված խարդախության վերաբերյալ քրեական գործերի քննության շրջանակներում անձին առաջադրված մեղադրանքը լինում է ոչ հիմնավոր, ինչը հանգեցնում է դատարաններում քրեական գործի վարույթի կարճման՝ արարքում խարդախության հանցակազմի բացակայության, մեղադրյալի և տուժողի միջև իրավահարաբերությունների քաղաքացիաիրավական բնույթ կրելու պատճառաբանությամբ: Բացի դրանից՝ առկա է նաև հակառակ իրավիճակը, երբ տուժողի դիմումի հիման վրա խարդախության դեպքի կապակցությամբ նախապատրաստված նյութերով վերը նշված պատճառաբանությամբ քրեական գործի հարուցումը մերժվում է, սակայն քրեական հետապնդման մարմնի որոշման դատական վերանայման արդյունքում այն վերացվում է՝ որպես կանոն քրեական գործի հարուցման փուլում ձեռք բերված տվյալների թերիության, դրանց ոչ ճիշտ գնահատման և արդյունքում խարդախության դեպքի բացակայության մասին հապճեպ հետևության հանգելու պատճառով: Ստեղծված իրավիճակի հետևանքով ներկայումս խիստ արդիական է խարդախության և քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու դեպքերի սահմանազատման հստակ չափանիշների սահմանման խնդիրը:

«Քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որը պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները, իսկ 18-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ հանցագործություն է համարվում մեղավորությամբ կատարված, հանրության համար վտանգավոր այն արարքը, որը նախատեսված է սույն օրենսգրքով: Քաղաքաիրավական պատասխանատվության առաջացման ընդհանուր պայմաններն են՝ 1) հակաօրինական վարքագիծը (գործողություն կամ անգործություն), 2) վնասները, 3) պատճառական կապը վնասների և հակաօրինական գործողության միջև և 4) մեղքը: Հակաօրինական է համարվում այնպիսի վարքը, որը խախտում է քաղաքացիական իրավունքի նորմերը, համակեցության կանոնները, բարոյական նորմերը, գործարար շրջանառության սովորույթները, ինչպես նաև հակասում է քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին ու իմաստին¹: Կարելի է ասել, որ քրեական և

¹ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս (երրորդ հրատարակություն), Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջեր 499-520:

քաղաքացիական իրավախախտումները տարբերակելիս պետք է առաջնորդվել բացառման սկզբունքով. եթե վնաս պատճառած արարքը հատուկ նախատեսված չէ քրեական օրենսգրքով, ուրեմն դրա համար քրեական պատասխանատվությունը բացառվում է, և առաջ է գալիս միմիայն քաղաքացիաիրավական պատասխանատվության հարցը: Սակայն պարզ և տրամաբանական այս կանոնի կիրառումը խարդախության և խաբեության ազդեցության տակ կնքված գործարքների սահմանազատման պարագայում, ինչպես նշվեց, առաջացնում է մի շարք բացթողումներ ու բարդություններ:

«Ճ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն՝ խարդախությունը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը: Քրեական իրավունքի տեսության մեջ հափշտակություն ասելով՝ հասկացվում է ուրիշի գույքը ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնելը կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը, եթե հանցավորն այդ գույքը տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել²: Խարդախության և հափշտակության հասկացությունների համադրության դեպքում կստացվի խարդախության հանցակազմի հետևյալ բնորոշումը. խարդախությունը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքը զգալի չափերով, ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնելը կամ այն հանցավորինը կամ այլ անձինը դարձնելն է, եթե հանցավորն իրական հնարավորություն է ունեցել տնօրինելու կամ օգտագործելու այդ գույքը, կամ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելն է:

Քրեական իրավունքի տեսության մեջ խարդախության և քաղաքացիաիրավական պարտավորությունը չկատարելու տարբերակելու համար հիմք են ընդունվում արարքի սուբյեկտիվ կողմի հատկանիշները. խարդախության հանցակազմն առկա է, եթե.

1) հանցավորը մինչև գույքին տիրանալը դիտավորություն ունի ուրիշի գույքը ապօրինի, անհատույց, շահադիտական նպատակով վերցնել և չվերադարձնել,

2) վերցրած գույքի դիմաց հատուցում չի կատարվում³:

Խարդախության սահմանազատումը քաղաքացիաիրավական պարտավորությունները չկատարելու դեպքերից անհնար է, եթե հաշվի չառնվի իրավախախտման սուբյեկտիվ կողմը: Անձի օգտին որևէ գործողություն կատարելու պայմանով նարնից գույք ստանալը, եթե առկա է եղել այդ գույքին տիրանալու դիտավորություն, պետք է որակվի որպես խարդախություն⁴:

Հարցի վերաբերյալ նույնպիսի իրավական դիրքորոշում ունի նաև «Ճ վճռաբեկ դատարանը: Մասնավորապես, 24.02.2011 թ. թիվ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով որոշման 29-րդ կետում վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. խարդախությունը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքերից տարանջատելիս անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝ ա) խարդախության դեպքում տուժողին խա-

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս: 5-րդ հրատարակություն (փոփոխություններով և լրացումներով): Խմբ. Գ. Ս.Ղազինյանի, Եր., ԵՊՀ հրատ., 2012, էջ 361:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 401:

⁴ Տե՛ս Борзенков Г. Н. Ответственность за мошенничество (вопросы квалификации). М., 1971, էջ 100:

բելու կամ նրա վստահությունը չարաշահելու մտադրությունն անձի մոտ ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը և բ) խարդախության դեպքում անձի մոտ քաղաքացիաիրավական պայմանագրով ստանձնած պարտավորությունները (գույքը փոխանցել, կատարել վարկային պարտավորությունը, պարտքը վերադարձնել և այլն) չկատարելու դիտավորությունը ծագում է նախքան գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքներ ձեռք բերելը:⁵ ՌԴ սահմանադրական դատարանը, քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարման համատեքստում քննարկելով խարդախության համար պատասխանատվություն նախատեսող իրավանորմի սահմանադրականությունը, նշում է՝ իրավաչափ քաղաքացիաիրավական գործարքի քողի տակ կատարված խարդախության համար քրեական պատասխանատվությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ կապացուցվի, որ այդ գործարքը կնքելիս անձը գործել է դիտավորությամբ՝ հետապնդելով գույք հավիշտակելու կամ գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելու նպատակ:⁶ Վերահաստատելով խնդրի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը 08.06.2012 թ. թիվ ԵՇԴ/0037/01/11 քրեական գործով որոշման մեջ նշում է. «Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում առանձնացնել քրեաիրավական ներգործության միջոցներից քաղաքացիաիրավական ներգործության միջոցների տարբերակման հետևյալ հիմքերը՝ ա) քրեաիրավական ներգործության միջոցը հիմնվում է օրինականության սկզբունքի վրա. քրեական պատասխանատվության միակ հիմքն այնպիսի արարքի կատարումն է, որը պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: ՀՀ քրեական օրենսգրքով արգելված արարք կատարած անձը ենթակա է պատասխանատվության՝ անկախ որևէ անձի վնաս պատճառած լինելու հանգամանքից: Այլ խոսքով՝ քրեաիրավական ներգործության միջոցները նպատակ են հետապնդում պատժել հանցանք կատարած անձին: Քաղաքացիաիրավական ներգործության միջոցները հիմնվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձին պատճառված վնասը վերականգնելու, փոխհատուցելու գաղափարի վրա և իրավախախտի համար առաջացնում են միայն գույքային հետևանքներ, բ) արարքի ճիշտ քրեաիրավական որակման և հետևաբար նաև քրեաիրավական ներգործության միջոցի ընտրության համար կարևոր նշանակություն ունի մեղքի ձևը: Քաղաքացիաիրավական ներգործության միջոցների կիրառման ժամանակ իրավախախտի կողմից պատճառված վնասը ենթակա է հատուցման ամբողջ ծավալով՝ անկախ նրա մեղքի ձևից, գ) ՀՀ քրեական օրենքով արգելված արարք կատարած անձին պատասխանատվության ենթարկելիս պետությունը (բացառությամբ մասնավոր մեղադրանքի գործերի) կաշկանդված չէ տուժողի կարծիքով և հանրային միջոցներով իրականացնում է քրեաիրավական պաշտպանություն: Քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտման դեպքում կողմերը կարող են ազատ կամահայտնության արդյունքում համաձայնության գալ հասցված վնասի վերականգնման հարցում: Այլ խոսքով՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք իրենց քաղաքացիական իրավունքների պաշտպանությունն իրականացնում են իրենց հայեցողությամբ: Այն դեպքում, երբ քաղաքացիաիրավական պարտավորությունների խախտումն չի պարունակում քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշները, նշված արարքը կատարած անձի նկատմամբ քրեաիրավական ներ-

⁵ Տե՛ս <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=68940>

⁶ Տե՛ս Определение Конституционного Суда РФ от 29.01.2009 № 61-О-О, կետ 2, <http://www.ksrf.ru/ru/Decision/Pages/default.aspx>

գործության միջոցների կիրառությունը բացառվում է: Այս դեպքում քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը տուժողի հայեցողությամբ պետք է կատարվի մասնավոր իրավունքի տիրույթում՝ քաղաքացիաիրավական և քաղաքացիադատավարական միջոցներով: Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ այն դեպքում, երբ քրեական օրենքով արգելված արարքի հետևանքով որևէ անձի գույքային վնաս է պատճառվել, քրեական պատասխանատվությունից բացի, դրա հետ համակցության մեջ, կարող են գործել նաև քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցները (կետեր 22, 23)»⁷:

Վերոնշյալի ամբողջական վերլուծությունը թույլ է տալիս հանգել այն միանշանակ եզրակացության, որ խարդախության սահմանազատումը քաղաքացիաիրավական պարտավորությունների չկատարումից պետք է առավելապես իրականացվի արարքի սույբեկտի կողմի բաղկացուցիչների, հատկապես՝ իրավախախտի դիտավորության բովանդակության, դրա ծագման պահի, նրա նպատակի համատեքստում: Գործնականում ընդունելով վերը նշված տարրերի բացահայտման բարդությունը՝ այնուամենայնիվ կարծում ենք, որ քրեական հետապնդման մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները խարդախության դեպքերի վերաբերյալ գործերի քննության բազմակողմանիությունը, լրիվությունն ու օբյեկտիվությունն ապահովելու համար: Դիտավորության առկայության ապացուցման դժվար լինելը չպետք է այդպիսի գործողություններն անպատժելի համարելու հիմք հանդիսանան: Դիտավորության առկայության մասին կարող են վկայել մի շարք հանգամանքներ. 1) անձի վարքագիծը գույքը ստանալուց հետո, 2) «պարտքի» անհրաժեշտության հիմնավորումն այնպիսի հանգամանքներով, որոնք չեն համապատասխանում իրականությանը, 3) այնպիսի իրերը «ժամանակավոր օգտագործման» ստանալը, որոնք տվյալ անձն ակնհայտորեն չի կարող օգտագործել ըստ նպատակային նշանակության, 4) անձի կողմից իր վրա ակնհայտ անիրագործելի պարտավորություն վերցնելը, 5) վերցրածը վերադարձնելուց խուսափելու նպատակով առանձին գործողությունների կատարումը, 6) նույնաբնույթ գործողությունների պարբերական կամ միասեռ օբյեկտների նկատմամբ կատարումը⁸: Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով ապացուցման գործընթացում ուշադրության արժանի այս հանգամանքներին, նշում է, որ անձի կողմից խարդախություն կատարելու դիտավորության առկայության մասին մասնավորապես կարող են վկայել պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ֆինանսական կամ տեխնիկական միջոցների, համապատասխան արտոնագրերի բացակայությունը, հանցավորի կողմից կեղծ փաստաթղթերի, երաշխավորագրերի օգտագործումը, ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկությունները թաքցնելը, կեղծ ձեռնարկություն ստեղծելը, որը հանդես է եկել որպես պայմանագրի կողմ և այլն⁹:

Դրա հետ մեկտեղ՝ «Վճռաբեկ դատարանը, քննարկելով խարդախության համար քրեաիրավական և քաղաքացիաիրավական պատասխանատվության հարաբերակցության հարցը, հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Եթե քաղաքացիաիրավական հարաբերության հենքը վերաբերում է կարգավորիչ գործառույթ իրականացնող իրավունքի ճյուղին, ապա քրեական իրավունքը և դատավարությունը, մարմնավորելով

⁷ <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78342>

⁸ Տե՛ս Բорзенков Г. Н. նշվ. աշխ., էջեր 100-101:

⁹ Տե՛ս «Վճռաբեկ դատարանի «Վ Կ 08.06.2012 թ. թիվ ԵՇԴ/0037/01/11 քրեական գործով որոշումը, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=78342>

իրավունքի պահպանիչ գործառնությամբ, իրենց բնույթով ածանցյալ են իրավունքի տվյալ ճյուղերից, մասնավորապես քաղաքացիական իրավունքից և դատավարությունից: Այլ կերպ՝ ներգործության քրեաիրավական և քրեադատավարական միջոցները չպետք է այնպիսին լինեն, որ խաթարեն քաղաքացիաիրավական ու քաղաքացիադատավարական հարաբերությունների ներքին տրամաբանությունը, անորոշություն ու անկանխատեսելիություն ստեղծեն քաղաքացիաիրավական շրջանառության մեջ: Այս առումով անթույլատրելի է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ բնականոն գույքային շրջանառությունը խաթարող գործարքներ կնքելու պրակտիկան: Այդ փաստերը կարող են խեղաթյուրել քաղաքացիաիրավական հարաբերությունները, սպառնալ իրավական անվտանգությանը, պայմաններ ստեղծել, որ անձինք խուսափեն հարկային պարտավորությունների կատարումից, ինչպես նաև այլ եղանակներով վնասել իրավաչափ հանրային շահերը: Նման դեպքերում պետությունը պարտավոր է գործող քաղաքացիական օրենսդրության պահանջների անտեսմամբ գործարքներ կնքած քաղաքացիների գույքային և այլ իրավունքների վերականգնումը դիտել հանրային շահի տիրույթում և հանրային միջոցներ ծախսելով՝ իրականացնել նշված մասնավոր շահերի քրեաիրավական պաշտպանություն»¹⁰ (կետեր 30, 31):

Այսպիսի տեսակետ են արտահայտում նաև որոշ իրավաբան-գիտնականներ. քաղաքացին, հաճախ չարաշահելով իր քաղաքացիական իրավունքները, դիմում է իրավապահ մարմիններին՝ մասնավոր-իրավական գործարքով սահմանված պարտավորությունները ժամանակին չկատարած մյուս կողմին մեղադրելով հանցանք (խարդախություն) կատարելու մեջ: Դրա հետ մեկտեղ՝ իրավապահ մարմինների կողմից թույլ են տրվում նյութական իրավունքի էական խախտումներ՝ կապված խարդախության մեղսագրման հետ (քաղաքացու գործողություններում դիտավորության արկայությունն ստուգելու ոչ լրիվություն՝ քաղաքացիաիրավական պատասխանատվության արկայության և նրա ղեկավարած կազմակերպության գործունեությունն ստուգելու բացակայության պայմաններում): Խարդախություն կատարելու մասին հայտարարությամբ իրավապահ մարմիններին դիմելը խախտում է կողմերի հավասարության և նրանց կամքի փոխհամաձայնեցման սկզբունքները մասնավոր գործարքի շրջանակներում: Իրավապահ մարմիններն իրենց հերթին նույնպես խախտում են քաղաքացիաիրավական հարաբերությունների շրջանակներում մասնավոր գործերին միջամտելու անթույլատրելիության սկզբունքը¹¹:

Սակայն այս մոտեցումն իրավացիորեն քննադատության է արժանացել թե՛ քրեական իրավունքի տեսության և թե՛ դատական պրակտիկայում: Մասնավորապես, դեռևս 19-րդ դարի ռուս քրեագետ Վ. Ֆոյնիցկին նշում է. «Նույնիսկ ընդունելի համարելով, որ տուժողի անփութությանը կարելի է քաղաքացիաիրավական հարցերում իրավական նշանակություն տալ միայն այդ պատճառով, որ այն քրեական արդարադատության ոլորտ տեղափոխելու որևէ հիմք չկա: Անփութությունը տուժողի գույքը չի դարձնում հանցավորինը, հետևաբար՝ գույքը նրա համար շարունակում է մնալ ուրիշինը: Եվ եթե պետությունը ցանկանում է պատժել անփութությունը՝ զրկելով անձին օրենքի հովանա-

¹⁰ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը 24.02.2011 թ. թիվ ԵԿԴ/0176/01/09 քրեական գործով, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=68940>

¹¹ Луценко С. Правовая неопределенность квалификации уголовной и гражданско-правовой ответственности при отправлении правосудия (разрешении дела), <http://www.kodeks.ru/3058.html>

վորությունից, ապա այդպիսով ամենևին չի վերացնում խաբեությանը գույք ձեռք բերած կողմին ևս պատժելու իր իսկ պարտավորությունը»¹²:

Վաշխառության համար քրեական պատասխանատվություն նախատեսող քրեաիրավական նորմի սահմանադրականության վերաբերյալ որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ ևս հակադիր է: Այսպես, Սահմանադրական դատարանի 05.04.2011 թ. թիվ 647 որոշման համաձայն՝ «Քրեական օրենսդրության միջոցով օրենսդիրն իր առջև դրել է հանցագործությունների կանխման միջոցով հանցագործությունների հետևանքով իրավունքների և ազատությունների խախտումների կանխման խնդիր, իսկ քաղաքացիական օրենսդրության դեպքում օրենսդիրն իր առջև դրել է խախտված իրավունքների վերականգնման ապահովման խնդիր, ինչը նշանակում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում առկա են քաղաքացիական իրավունքների խախտման դեպքում քաղաքացիական դատավարության կարգով նշված իրավունքների վերականգնման համար նախադրյալներ հանդիսացող նորմեր: Այդպիսիք են, մասնավորապես, դիմողի կողմից վկայակոչված՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 305 և 313-րդ հոդվածները, որոնք նախադրյալներ են հանդիսանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարքի կամ ստրկացուցիչ գործարքի հետևանքով խախտված իրավունքները քաղաքացիական դատավարության կարգով վերականգնելու համար: Կոնկրետ արարքի համար միաժամանակ քրեական և քաղաքացիական պատասխանատվություն սահմանող նորմերն ունեն տարբեր առարկաներ, և դրանց միջոցով օրենսդիրը լուծում է տարբեր խնդիրներ. քաղաքացիական պատասխանատվության սահմանումը չի բացառում քրեորեն պատժելի արարքի համար պատասխանատվության սահմանումը: Ընդ որում, այս կամ այն արարքի հանրային վտանգավորության գնահատումը և դրա քրեականացումը գտնվում են օրենսդրի բացառիկ իրավասությունների տիրույթում՝ հաշվի առնելով խնդրի համակարգային լուծումը և ելնելով վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության հստակ տարանջատման ու համադրված կանոնակարգման անհրաժեշտությունից: Օրենսդիրն իրավակիրառողին չի ընծեռում քաղաքացիական և քրեական պատասխանատվություն սահմանող նորմերի միջև ընտրություն կատարելու հնարավորություն: Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի վերաբերյալ գործերը հանդիսանում են մասնավոր հետապնդման գործեր, արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի առկայության դեպքում գործարքի կողմ հանդիսացող մասնավոր անձին է հնարավորություն վերապահված ընտրություն կատարելու նշված արարքը կատարած, գործարքի մյուս կողմ հանդիսացող մասնավոր անձին քաղաքացիական պատասխանատվության ենթարկելու համար հայց կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար համապատասխան հայտարարություն ներկայացնելու միջև: Բոլոր դեպքերում, օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանող գործարք կնքած անձը կարող է և պարտավոր է իմանալ, որ սովյալ արարքի համար սահմանված է ոչ միայն քաղաքացիական, այլ նաև քրեական պատասխանատվություն»¹³ (կետ 6):

¹² Фойницкий И. Мошеничество по русскому праву, Часть II, СПб, «Общественная польза», 1871, էջ 171:

¹³ <http://concourt.am/armenian/decisions/common/2011/pdf/sdv-947.pdf>

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս, անդրադառնալով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով ամրագրված իրավունքների, այդ թվում՝ սեփականության իրավունքն պաշտպանելու պետության պարտավորությանը, նշում է. «Դատարանը կրկնում է, որ ... «իրենց իրավասության շրջանակում Կոնվենցիայով նախատեսված յուրաքանչյուր մարդու իրավունքները և ազատությունները պաշտպանելու» Կոնվենցիայի 1-ին հոդվածով նախատեսված պետության հիմնարար պարտավորությունը պահանջում է, որ պետք է լինի արդյունավետ պաշտոնական քննություն: Քննություն կատարելու պարտավորությունը «ոչ թե արդյունքի, այլ միջոցների պարտավորություն է»։ ամեն քննություն չէ, որ պետք է անհրաժեշտաբար հանգեցնի դիմողի կողմից իրադարձությունների նկարագրության հետ համընկնող եզրակացության, այնուամենայնիվ, սկզբունքորեն այն պետք է հանգեցնի գործով փաստերի հաստատմանը, իսկ դիմողի պնդումների ճշմարիտ լինելու դեպքում՝ նաև մեղավորների բացահայտմանն ու պատասխանատվությանը: Հետևաբար՝ քննությունը պետք է մանրակրկիտ լինի, ինչը նշանակում է, որ իշխանությունները պետք է միշտ լուրջ փորձ անեն պարզելու եղելությունը և չպետք է հիմնվեն հապճեպ կամ թույլ հիմնավորված եզրակացությունների վրա՝ դադարեցնելու համար քննությունը: Նրանք պետք է կատարեն հնարավոր բոլոր ողջամիտ քայլերը ապահովագրելու համար դեպքին առնչվող ապացույցները»¹⁴ (կետ 83):

Համակարծիք լինելով ՀՀ սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին՝ անհրաժեշտ ենք համարում նկատել, որ մարդու իրավունքների քրեաիրավական պաշտպանության պետության պարտավորությունը չի կարող կախվածության մեջ դրվել պայմանագրային հարաբերությունների և մասնավորապես՝ գրավոր գործարքի առկայության կամ բացակայության հանգամանքով: Քրեական իրավունքի տեսանկյունից քաղաքացիաիրավական գրավոր գործարքը պետք է դիտել որպես զուտ խաբեության միջոց: Խնդիրն այն է, որ հակառակ մոտեցման դեպքում անտեսվում են քրեական և քաղաքացիական նյութաիրավական և դատավարական նորմերի սկզբունքների և խնդիրների արմատական տարբերությունները: Բացի այն, որ խարդախության և խաբեության ազդեցության տակ կնքված գործարքների՝ որպես իրավախախտումների միջև առկա են մի շարք տարբերություններ (օբյեկտիվ հատկանիշներից՝ արարքների բովանդակությունը, առարկան, հետևանքը, սուբյեկտիվ հատկանիշներից՝ դիտավորության ուղղվածությունը, նպատակը և այլն), խարդախության վերաբերյալ քրեաիրավական նորմերի և խաբեության ազդեցության տակ կնքված գործարքների մասին դրույթների միջև որևէ մրցակցություն չկա: Դրանք զուգահեռաբար կարգավորում և պահպանում են սեփականության հարաբերությունների տարբեր կողմեր և սահմաններ¹⁵:

¹⁴ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Մաքսիմովն ընդդեմ Ռուսաստանի գործով, 18 մարտի 2010 թ., զանգատ թիվ 43233/02, <http://hudoc.echr.coe.int/sites/eng/pages/search.aspx?i=001-97790>

¹⁵ Տե՛ս Безверхов А., Розенцавайг А. Мошенничество и сделка, совершенная под влиянием обмана: конкуренция или совокупность? // Уголовное право. 2012, N 3, էջեր 7-8:

DISTINCTION OF FRAUD AND A TRANSACTION MADE UNDER INFLUENCE OF DECEIT

Armen Grigoryan

*PhD Student of the Chair of Criminal Law
in Law Department Yerevan State University*

The problem of distinction of fraud as a criminal offence and transactions made under influence of deceit is analyzed in the article. The essence of criminal and civil liabilities for similar delicts, the characteristic features and correlation of the two types of liability are also discussed. The legal attitude of the higher jurisdiction courts of the Republic of Armenia and the Russian Federation towards the disputable problem, the legal recommendations of the European Court of the Human Rights on the relevant matter are illustrated.

РАЗГРАНИЧЕНИЕ МОШЕННИЧЕСТВА ОТ СДЕЛКИ, ЗАКЛЮЧЕННОЙ ПОД ВЛИЯНИЕМ ОБМАНА

Армен Григорян

Аспирант кафедры уголовного права ЕГУ

В статье затронута проблема разграничения мошенничества, как уголовного правонарушения, и гражданско-правовых сделок, заключенных под влиянием обмана, и ответственности за них. Также обсуждаются суть уголовной и гражданской ответственности за схожие по содержанию правонарушения, особенности и соотношение двух видов ответственности. Анализируются правовые позиции судов высших инстанций Республики Армения и Российской Федерации по данному вопросу, а равно рекомендации Европейского суда по правам человека относительно обсуждаемой проблемы.

Բանալի բառեր – խարդախություն, գործարք, խաբեություն, սահմանազատում, դիտավորության ուղղվածություն, արդյունավետ քննություն, քրեական և քաղաքացիական պատասխանատվություն

Key words: fraud, transaction, deceit, distinction, directionality of intent, effective investigation, criminal and civil liability.

Ключевые слова: мошенничество, сделка, обман, разграничение, направленность умысла, эффективное расследование, уголовная и гражданская ответственность.